ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, +(374)60881111 vedimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 թվականի N 2053-Ա

«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի և «Ֆաստ Գլոբալ Սոլուշնս» ՍՊ ընկերության միջև 2024թվականի օգոստոսի տասներկուսին կնքվել է « ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/07» ծածկագրով ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատակարարման գնման պայմանագիր(այսուհետև՝ պայմանագիր), որի 2.4.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ պայմանագիր) սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

«Ֆաստ Գլոբալ Սոլուշնս»ՍՊ ընկերության կողմից չեն մատուցվել պայմանագրի 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող ծառայությունը:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի),եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի 1 հավելվածով նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Վեդու համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական

հիմքերով, միակողմանի լուծում է պայմանագիրը 3097500/երեք միլիոն իննսունյոթ հազար հինգ հարյուր/ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդօրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

			Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	01335288	Ք.Երևան Մարգարյան փ.45շ.105բն		V		07 . 11. 2024թ. N ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/07

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 07
ք. Վեդի